ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/48

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Բողոք բերող՝ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Մասնակցությամբ՝

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Վ. Մակարյանի,

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Մինասյանի, Ռ. Դանիելյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, փորձաքննության ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 15.06.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, իսկ նոր ընթացակարգի անցկացումը իրականացնել առանձին չափաբաժիններով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 14.06.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 15.06.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/9635-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 15.06.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

15.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/48 համարի ծածկագիրը:

24.06.2021թ.-ին, 02.07.2021թ.-ին և 09.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.07.2021թ.-ին:

2. «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ն 15.06.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմանագրի նախագծի (հավելված N 6) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պահանջվող ծառայությունները սահմանված են որպես 1(մեկ) չափաբաժին, այն դեպքում, երբ որ պահանջվող ծառայությունների մեջ կան ծառայություններ, որոնք պետք է իրականացվեն համապատասխան լիցենզավորում

ունեցող կազմակերպությունների կողմից և <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ >> օրենքով սահմանված չեն:

Մասնավորապես՝

1. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետով պահանջվում է <<Կոունկների և ամբարձիչ սարքավորումների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների ուսումնասիրություն և զննություն, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում, համապատասխան՝ փորձնական բեռի ապահովում՝ Gփորձ=1.25 Gաշ>> ծառայություն: Պատվիրատուի կողմից լաբորատոր փորձարկման բացվածքում ներառվել են տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման օրենսդրությամբ սահմանված գործառույթներ (անվտանգության հանգույցների ուսումնասիրություն և զննություն, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում), ինչպես նաև ներկայացված է Gփորձ=1.25 Gաշ փորձնական բեռի ապահովման պահանջ, ինչը կատարվում է համապատասխան լիցենզավորում անցած կազմակերպությունների կողմից, և չի կարող պահանջվել տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնողից: Ինքին <<լաբորատոր փորձարկում> տերմինը չի կարող օգտագործվել տեխնիկական անվտանգության փորձաքննության հետ միևնույն չափաբաժնում, քանի որ դրանք հանդիսանում են տարբեր ծառայություններ:

2. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 2-րդ կետով պահանջվում է <<60-3500կՎտ հզորությամբ կաթսայատների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների զննում, գազերի և ծխագազերի արտահոսքի որոշում, համապատասխան՝ փորձնական ճնշման ապահովում Pփորձ=1.25 Pաշ>> ծառայություն, որտեղ լաբորատոր փորձարկման ծառայության բացվածքում նշված գազերի և ծխագազերի արտահոսքի որոշման և Pփորձ=1.25 Pաշ փորձնական ճնշման ապահովման պահանջը չի կարող պահանջվել տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման իրավունք ունեցող կազմակերպություններից:

3. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ կետով սահմանված ծառայությունները հանդիսանում են տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման գործառույթ, ոչ թե լաբորատոր փորձարկում:

4. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ կետով սահմանված <<Արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատների, ավտոկլավների, կոունկների և ամբարձիչ սարքավորումների) շահագործող անձնակազմի ուսուցում՝ համաձայն

հաստատված ուսումնական ծրագրերի ժամանակացույցի՝ ոչ պակաս քան 20 ուսումնական ժամ, որակավորում և աշխատանքի թույլտվության վկայականների տրամադրում>> ծառայության ծածկագիրն է՝ 80551100, իսկ արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննության իրականացման ծածկագիրը սահմանված է 50531140:

Սույն կետի վերաբերյալ <<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ը առարկություն չունի, քանի որ գործառույթները իրար փոխկապակցված են, և, անկախ ծածկագրերի տարբերությունից համարվում են իրար լրացնող:

5. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 5-րդ կետով սահմանված <<Օդ, He, O2, CO2 միջավայրում և բարձր ճնշման՝ Pաշ = 100-400 կգուժ/սմ² տակ աշխատող գազագլանաանոթների (բալոնների) փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ արատորոշում, անհամասեռությունների հայտնաբերում, անոթի պատի հաստաչափում, ներքին պատերի վնասվածքների (փոսիկների) ուլտրաձայնային ախտորոշում, համապատասխան՝ փորձնական ճնշման ապահովում՝ Pփորձ=1.5 Pաշ>> ծառայությունը նույնպես համարվում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ և չի հանդիսանում տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման օրենսդրությամբ սահմանված գործառույթ: <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> օրենքով <<Օդ, He, O2, CO2 միջավայրում և բարձր ճնշման՝ Pաշ = 100-400 կգուժ/սմ² տակ աշխատող գազագլանաանոթները(բալոնները) չեն հանդանիսանում Արտադրական վտանգավոր օբյեկտներ և ներառված չեն տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթակա օբյեկտների ցանկում:

6. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ծավալաթերթի բացվածքի 32-րդ, 35-ից 46-րդ կետերով պահանջվող ծառայությունները նույնպես չեն մտնում տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման օրենսդրությամբ սահմանված գործառույթների մեջ և իրականացվում են լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

Վերոնշյալում շարադրվածը հակասում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին՝ սահմանափակելով տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող հնարավոր մասնակիցների մասնակցությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, իսկ նոր ընթացակարգի անցկացումը իրականացնել առանձին չափաբաժիններով:

08.07.2021թ.-ին ներկայացրած թիվ 1/776 գրությամբ՝ Ընկերությունը հավելել է նաև հետևյալը.

««Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված դիրքորոշման կապակցությամբ տեղեկացնում ենք, որ ՀՀ ՊՆ-ի կողմից որպես հիմնավորում ներկայացված բոլոր փաստաթղթերում հստակ նշված են, որ փորձաքննության և փորձարկման ծառայությունները հանդիսանում են լիցենզավորման ենթակա տարբեր ծառայություններ, ինչը հաստատվում է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության <<Հավատագրման ազգային մարմին>> ՊՈԱԿ կողմից տրամադրված գրությամբ, իսկ հավատարմագրումը չի կարող պարտադրվել այլ գործառույթ իրականացնող կազմակերպությանը և դա իրականացվում է կամավորության սկզբունքով:

<<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ը իր գործառույթները իրականացնում է բացառապես <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ >> օրենքի, կազմակերպության կանոնադրության և ոլորտին վերաբերվող այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա, որոնցով փորձարկում կատարելու պարտադիր պայման և փորձարկման լիցենզավորման առկայություն սահմանված չեն:

<<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ հայտնում է իր անհամաձայնությունը, քանի որ սույնով խախտվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները(2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.:)»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 15.06.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/9722-2021 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 15.06.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 06.07.2021թ.-ին թիվ ՊՆ/02/3458-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրվել է 16.06.2021թ. /ԲՔԱ-ԼՕ/2/9722-2021 գրությունը, կապված պաշտպանության նախարարության կարիքների համար 2020թ. «Փորձաքննության ծառայությունների (ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն, փորձարկում, պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում)» վերաբերյալ ՀՀ ԱԻՆ §Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն¦ ՊՈԱԿ-ի բողոքը, որի առնչությամբ հայտնում եմ, որ՝ գնման առարկա հանդիսացող «Փորձաքննության ծառայությունների» ձեռքբերման մեջ ներառված է.

1. Կռունկների և ամբարձիչ սարքավորումների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների ուսումնասիրություն և զննություն, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում, համապատասխան՝ փորձնական բեռի ապահովում՝ Gփորձ=1.25 Gաշ:

2. 60-3500կՎտ հզորությամբ կաթսայատների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների զննում, գազերի և ծխագազերի արտահոսքի որոշում, համապատասխան՝ փորձնական ճնշման ապահովում Pփորձ=1.25 Pաշ:

3. Վերելակների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների զննություն, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում:

4. Արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատների, ավտոկլավների, կռունկների և ամբարձիչ սարքավորումների) շահագործող անձնակազմի ուսուցում՝

համաձայն հաստատված ուսումնական ծրագրերի ժամանակացույցի՝ ոչ պակաս քան 20 ուսումնական ժամ, որակավորում և աշխատանքի թույլտվության վկայականների տրամադրում, 5.Օդ, He, O2, CO2 միջավայրում և բարձր ճնշման՝ Pաշ= 100-400 կգուժ/սմ² տակ աշխատող գազագլանաանոթների (բալոնների) փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ արատաորոշում, անհամասեռությունների հայտնաբերում, անոթի պատի հաստաչափում, ներքին պատերի վնասվածքների (փոսիկների) ուլտրաձայնային ախտորոշում, համապատասխան՝ փորձնական ճնշման ապահովում՝ Pփորձ=1.5 Pաշ:

Փորձարկման և փորձաքննության աշխատանքների (ծառայությունների) փոխկապակցվածության հանգամանքով պայմանավորված՝ հաճախ փորձաքննության համար, ըստ կանոնակարգի, պահանջ է առաջանում իրականացնելու արտադրական վտանգավոր օբյեկտների՝ բարձր ճնշման տակ աշխատող սարքավորումների և անոթների (կաթսաներ և/կամ ԴԴԱ, գազագլանաանոթներ) պիտանելիության կամ ԱՎՕ-երի (կռունկ, վերամբարձ մեխանիզմ) առանձին հանգույցների, սարքավորումների և մասերի փորձարկում:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ 2-ին կետի՝

2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Ապահովելով զինատեխնիկայի մարտունակության, նրանց շահագործման առանձնահատկությունների ու տեղակայման վայրերի հետ կապված ծառայողական առանձնահատկությունները՝ ՊՆ համակարգում առկա ԱՎՕ-երի փորձաքննությունն անհրաժեշտ է իրականացնել փորձարկման աշխատանքների հետ համատեղ՝ գնման առարկա հանդիսացող «Փորձաքննության ծառայություններ» ծառայությունների ձեռքբերումը դիտարկելով որպես մեկ ամբողջական չափաբաժին, որը ՀՀ զինված ուժերի պահանջով սահմանում է պատվիրատուն՝ ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանումը (համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 7-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերի), չնայած այն հանգամանքի, որ փորձարկման ու փորձաքննության ծառայություններն ունեն տարբեր՝ ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013թ. և ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2019թ. ստանդարտներով հաստատված հավատարմագրում:

Հիմք ընդունելով §Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին¦ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի՝ Տեխնիկական անվտանգության փորձաքննություն կարող են իրականացնել Տեխնիկական

անվտանգության ազգային կենտրոնը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ հավատարմագրված անձ) և 18-րդ հոդվածների պահանջները ՝ ՊՆ զորամասերում ու ստորաբաժանումներում շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննությունը, ուսումնամեթոդական ծրագրերի մշակումը, ոլորտի մասնագետների, փորձագետների, տնտեսության մեջ աշխատող ինժեներատեխնիկական և մասնագետ կադրերի ուսուցման և որակավորման գծով աշխատանքների կազմակերպումը և փորձարկումը պետք է իրականացվի լիազոր մարմնի կողմից, եթե մրցույթի մասնակիցը հավատարմագրված է վերոհիշյալ ստանդարտներով, և քանի որ փորձարկման լաբորատորիաները և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինները հանդիսանում են տարբեր ՀԳՄ-ներ ու վերջիններիս հավատարմագրումը իրականացվում է առանձին գործընթացներով, ուստի մեկ իրավաբանական անձն իր կազմում կարող է ունենալ ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013թ. և ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2019թ. ստանդարտների պահանջներին համապատասխան հավատարմագրված փորձարման լաբորատորիա և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին (Հիմք՝ լիազոր մարմնի՝ 26.04.2021թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի N ԱՕ-250 գրություն), կամ կարող են նաև ՀՀ կառավարության N 526-Ն «Գնումների գործընթացը կազմակերպման կարգի» 32-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Միաժամանակ նշեմ, որ «Արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատների՝ կաթսաների և սարքավորումների, ավտոկլավների, կոունկների և ամբարձիչ սարքավորում-ների) շահագործող անձնակազմի ուսուցում՝ համաձայն հաստատված ուսումնական ծրագրերի ժամանակացույցի՝ ոչ պակաս քան 20 ուսումնական ժամ, որակավորում և աշխատանքի թույլտվության վկայականների տրամադրում» գնվող ծառայությունները ներառված են 2021թ. բյուջեի գնման պլանով հաստատված գումարի համապատասխան իրականացման 50531140/1 ծածկագրի (CPV կոդ) շրջանակներում և ոչ մի կապ չունեն 80551100 ուսուցման ծառայություններ անվտանգության (պահակային ծառայություն) ոլորտում ծածկագրի հետ:

Ուստի բողոքում ներկայացրած առարկությունները հիմնավոր չեն, ծառայությունների դիտարկումը որպես մեկ չափաբաժին չի կարող հանդիսանալ սահմանափակում՝ մրցույթին

հնարավոր այլ մասնակիցների մասնակցությանը, որը չի հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի պահանջներին:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.06.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և թիվ 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում փորձաքննության ծառայությունների ձեռքբերումը (ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն, փորձարկում, պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում) և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 50531140/1:

iii. www.armeps.am/PPCM/ կայքում առկա ՀՀ պաշտպանության նախարարության 2021 թվականի գնումների պլանի համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար նշվել է 50531140/1, քանակը 1, իսկ գինը՝ 40 000 000 ՀՀ դրամ:

iv. www.gnumner.am կայքում առկա գնումների միասնական անվանացանկում (CPV կոդեր) առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար նշված է՝ 50531140, իսկ տեխնիկական ստուգման ու փորձարկման ծառայությունների համար նշված է՝ 71630000:

v. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

1. Կռունկների և ամբարձիչ սարքավորումների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների ուսումնասիրություն և զննություն,

մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում, համապատասխան՝ փորձնական բեռի ապահովում՝ Gփորձ=1.25 Gաշ:

2. 60-3500կՎտ հզորությամբ կաթսայատների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների զննում, գազերի և ծխագազերի արտահոսքի որոշում, համապատասխան՝ փորձնական ճնշման ապահովում Pփորձ=1.25 Pաշ:

3. Վերելակների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների զննություն, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում:

4. Արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատների, ավտոկլավների, կռունկների և ամբարձիչ սարքավորումների) շահագործող անձնակազմի ուսուցում՝ համաձայն հաստատված ուսումնական ծրագրերի ժամանակացույցի՝ ոչ պակաս քան 20 ուսումնական ժամ, որակավորում և աշխատանքի թույլտվության վկայականների տրամադրում:

5. Օդ, He, O2, CO2 միջավայրում և բարձր ճնշման՝ Pաշ = 100-400 կգուժ/սմ² տակ աշխատող գազագլանաանոթների (բալոնների) փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ արատաորոշում, անհամասեռությունների հայտնաբերում, անոթի պատի հաստաչափում, ներքին պատերի վնասվածքների (փոսիկների) ուլտրաձայնային ախտորոշում, համապատասխան՝ փորձնական ճնշման ապահովում՝ Pփորձ=1.5 Pաշ:

vi. Պատվիրատուի կողմից փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.06.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտեր ներկայացրել է միայն մեկ ընկերություն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 15.06.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև

մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.06.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և թիվ 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում փորձաքննության ծառայությունների ձեռքբերումը (ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն, փորձարկում, պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում) և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 50531140/1:

www.armeps.am/PPCM/ կայքում առկա ՀՀ պաշտպանության նախարարության 2021 թվականի գնումների պլանի համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար նշվել է 50531140/1, քանակը 1, իսկ գինը՝ 40 000 000 ՀՀ դրամ:

www.gnumner.am կայքում առկա գնումների միասնական անվանացանկում (CPV կոդեր) առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար նշված է՝ 50531140, իսկ տեխնիկական ստուգման ու փորձարկման ծառայությունների համար նշված է՝ 71630000:

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

1. Կռունկների և ամբարձիչ սարքավորումների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների ուսումնասիրություն և զննություն,

մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում, համապատասխան՝ փորձնական բեռի ապահովում՝ Gփորձ=1.25 Gաշ:

2. 60-3500կՎտ հզորությամբ կաթսայատների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների զննում, գազերի և ծխագազերի արտահոսքի որոշում, համապատասխան՝ փորձնական ճնշման ապահովում Pփորձ=1.25 Pաշ:

3. Վերելակների փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ անվտանգության հանգույցների զննություն, մետաղական ճոպանների անհամասեռությունների ուլտրաձայնային ախտորոշում:

4. Արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատների, ավտոկլավների, կռունկների և ամբարձիչ սարքավորումների) շահագործող անձնակազմի ուսուցում՝ համաձայն հաստատված ուսումնական ծրագրերի ժամանակացույցի՝ ոչ պակաս քան 20 ուսումնական ժամ, որակավորում և աշխատանքի թույլտվության վկայականների տրամադրում:

5. Օդ, He, O2, CO2 միջավայրում և բարձր ճնշման՝ Pաշ = 100-400 կգուժ/սմ² տակ աշխատող գազագլանաանոթների (բալոնների) փորձաքննություն, լաբորատոր փորձարկում՝ արատաորոշում, անհամասեռությունների հայտնաբերում, անոթի պատի հաստաչափում, ներքին պատերի վնասվածքների (փոսիկների) ուլտրաձայնային ախտորոշում, համապատասխան՝ փորձնական ճնշման ապահովում՝ Pփորձ=1.5 Pաշ:

Պատվիրատուի կողմից փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.06.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտեր ներկայացրել է միայն մեկ ընկերություն:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական

հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների

հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Ամբողջ վերոգրյալների ու սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, ուստի ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա են համապատասխանեցման նշված դրույթների պահանջներին:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և չեն բավարարում մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը, ուստի բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջները հիմնավոր չեն, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Անդրադառնալով Պատվիրատուի կողմից առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների խմբավորումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը, և միևնույն ժամանակ, սույն դրույթը քննարկելով գնումների օրենսդրության համատեքստում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ խմբավորումը չպետք է հանգեցնի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցության սահմանափակմանը, քանի որ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման կիրառման համար՝ անկախ հիմնավոր լինելու կամ չլինելու և հիմնավորվածության աստիճանի (օբյեկտիվ հանգամանքներից ելնելով), Պատվիրատուն պետք է նախ և առաջ հաշվի առնի Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և Կարգի 22-րդ կետով նախատեսված դրույթները՝ հնարավոր մասնակիցների համար ապահովի մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Նշված դրույթների կիրառումն ապահովելուց հետո նոր միայն Պատվիրատուն կարող է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորել մեկ չափաբաժնում՝ հիմնավորելով խմբավորելու անհրաժեշտությունը, դրա օրինաչափությունն ու հիմնավորվածությունը՝ ելնելով օբյեկտիվ պատճառներից ու այլընտրանքային՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների տարբեր չափաբաժիններում ներառելու հնարավորության բացակայությունից:

Ամբողջացնելով վերոնշյալները՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ նախ և առաջ՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու հարցի քննարկումը պետք է դիտարկել Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և

Կարգի 22-րդ կետի համատեքստում, այնուհետև՝ դիտարկել այն որպես առանձին իրավակարգավորող դրույթ՝ անդրադառնալով հիմնավորվածությանն ու օրինաչափությանը:

Բողոքի քննության ընթացքում բողոքաբերի և Պատվիրատու կողմից ներկայացված հանգամանքները համադրելով գործով ձեռք բերված ապացույցներին ու փաստական տվյալներին, ինչպես նաև դրանք դիտարկելով սույն որոշմամբ արված վերլուծությունների ու եզրահանգումների համատեքստում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման կիրառման համար՝ անկախ հիմնավոր լինելու կամ չլինելու և հիմնավորվածության աստիճանի (օբյեկտիվ հանգամանքներից ելնելով), Պատվիրատուն պետք է նախ և առաջ հաշվի առնի Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և Կարգի 22-րդ կետով նախատեսված դրույթները՝ հնարավոր մասնակիցների համար ապահովի մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Նշված դրույթների կիրառումն ապահովելուց հետո նոր միայն Պատվիրատուն կարող է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորել մեկ չափաբաժնում՝ հիմնավորելով խմբավորելու անհրաժեշտությունը, դրա օրինաչափությունն ու հիմնավորվածությունը՝ ելնելով օբյեկտիվ պատճառներից ու այլընտրանքային՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների տարբեր չափաբաժիններում ներառելու հնարավորության բացակայությունից:

Ելնելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքներից, անդրադառնալով բողոքով ներկայացված Օրենքի 25-րդ կետի դրույթների խախտման հիմքերին՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ դրանք հիմնավոր են, քանի որ Պատվիրատուն, որպես Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների կիրառման հիմնավորում, պատճառաբանել է, որ փորձարկման և փորձաքննության ծառայությունները միավորվել են մեկ չափաբաժնում՝ ելնելով զինատեխնիկայի մարտունակության, նրանց շահագործման առանձնահատկությունների ու տեղակայման վայրերի հետ կապված ծառայողական առանձնահատկությունների ապահովման անհրաժեշտությունից: Այնինչ՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «փորձարկում» և «փորձաքննություն» ծառայությունները ոչ միայն տարաբնույթ են և տարբեր նպատակներ հետապնդող գործողությունների ամբողջություն են, այլ նաև մեկ ամբողջության մեջ վերցրած՝ ծառայում են անվտանգության ապահովմանը, ռիսկերի հայտնաբերմանն ու չեզոքացմանը: Ուստի, զինատեխնիկայի մարտունակության, նրանց շահագործման առանձնահատկությունների ու

տեղակայման վայրերի հետ կապված ծառայողական առանձնահատկությունների ապահովման անհրաժեշտությունից է հենց բխում, որպեսզի «փորձարկում» և «փորձաքննություն» ծառայությունները բաժանվեն չափաբաժինների՝ ապահովելով հնարավոր մասնակիցների ավելի լայն շրջանակի մասնակցություն:

Ուստի, վերը նշված եզրահանգումներով պայմանավորված, բողոքով ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ՝ ընթացակարգը չկայացած հայտարարելուն պարտավորեցնելու պահանջն ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 15.06.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/48 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**